

պատմութիւնով, իր դիւցազնավէպերով, իր երգ ու պարով, իր ձայնով եւ, իբր հարազատ հայկական ծառ, պահած աւանդապաշտութեամբ, իր արմատներուն կենսունակութիւնը, իր տոհմական ոճը, իր հայրենի աւիշը, իր որդան կարմիրը եւ մշտադալար կանանչութիւնը:

Շնորհալի գիժն է Տարօնցին՝ վարձատրուած Ս. Կարապետէն: Իր միակ լարախաղացութիւնը սուրբին անուևով կ'ընէ:

Յամառ է Տարօնցին: Ադամանդը կը փշրուի՝ իր յամառութեան զարնուելով:

Փեթակի մը կը նմանի: Անզգուշ շարժում մը ու կը խայթուիս, եւ սակայն, աւելի մօտենալով, կը գտնես անմահական մեղր:

Իր հոգիին մէջ խօսքեր կան, այդ խօսքերէն դուրս ոչ մէկ խօսք չի լսեր: Իր հոգիին մէջ պատկերներ կան, այդ պատկերներէն դուրս ոչ մէկ պատկեր չի տեսներ: Իր եւութեան մէջ տարածուած է Տարօնը: Անկէ դուրս հայրենիք դժուարին կուգայ ըմբռնել: Ան կ'ըսէ.

-Ա՛հ, մըր սարեր, մըր հողեր, մըր քարեր, մըր աշխարհ...

Անիկա կ'ըսէ նաեւ, նոր օրերու ուխտով մը.

-Չիմ հայ անուն կ'ուզիմ պահիմ, Էնով ապրիմ, Էնով լէ մեռնիմ:

Վա՛յ անոր, որ փետուրի մը շուքով կը դպի իր ազգային սրբութեան: Տարօնցին կ'ալեկոծի՝ իբր ծով դիւրաբորբոք եւ ապառաժները կը սկսի աղալ:

Տարօնցիին լեզուն լեռները պատմուճանող ծաղիկներն են, որուն մէջ մարդ արբեցումէ արբեցում կը թաւալի: Տարօնցիին պարը այդ ծաղկաստանին հովն է, իր երգը՝ Աստղիկի բերնէն առնուած սրինգն է:

Անշուշտ, Տարօնցին անթերի էակ մը չէ:

Ունի նեղութիւններ իր հոգիին մէջ:

Իր մտքին մէջ՝ նեղութիւնը ազգութեան գաղափարապատկերին:

Իր կուրծքին տակ նեղութիւնը հայրենիքի քարտեսին:

Ու նեղութենէն՝ խաղերը «Տարօն» բառին վերջաւորութեան. Տարօնական, Տարօնականութիւն:

Եւ նեղութենէն ամլութիւնը՝ տալու արծուիկներ, նոր սերունդին մէջ:

Այս ընթացքով օր մը Ազգն է, որ կրնայ ըսել.